

Հետազոտական աշխատանք

*Հետազոտության թեման՝ «Գերմաներենի քերականության
ուսուցման առանձնահատկությունները ավագ դպրոցի
դասընթացում՝ գոյականի հոլովման օրինակով»*

Հետազոտող ուսուցիչ՝ Գոհար Վարդանյան

Քաղաք Գյումրի, ՀԱՊՀ ԳՄ ավագ դպրոց

Առարկա՝ «Գերմաներեն»

Ղեկավար՝ Կ.Ալեքսանյան

Գյումրի 2022

Բովանդակությունը

Ներածություն ----- 3

Գլուխ 1. Գերմաներենի քերականության ուսուցման առանձնահատկությունները ավագ դպրոցի դասընթացում՝ գոյականի հոլովման օրինակով----- 4

1.1 Գերմաներենի քերականության համակարգային բնույթը հոլովման օրինակով ----- 6

1.2 Գոյականի հոլովման համակարգը-----8

1.3 Հոլովման հատուկ դեպքերը

Հատուկ անունների հոլովումը----- 10 - 12

2. Եզրակացություն----- 13

3. Գրականության ցանկ----- 14

Ներածություն

Գերմաներենի և հայերենի քերականություններն ունեն բազմաթիվ ընդհանրություններ և տարբերություններ, որոնց համեմատությունը թերևս կօգնի գերմաներենի ավելի դյուրին և խորը տիրապետմանը:

Երկու լեզուների ձևաբանական ընդհանրություններից առաջին հերթին հարկ է նշել, որ երկու լեզուներում էլ գոյություն ունեն գրեթե նույն խոսքի մասերը, ինչպես օրինակ՝ գոյական, ածական, թվական, բայ, մակբայ, նախդիրներ, շաղկապներ և այլն: Գոյական անունը երկու լեզուներում էլ տարբերակում է թիվ և հոլով, բայը՝ դեմք, թիվ, ճամանակ, եղանակ, սեռ: Ածականներն ու որակական մակբայները տարբերակում են բաղդադման աստիճաններ, նախդիրներն ունեն որոշակի խնդրառություն և այլն: Մակայն բազմաթիվ ձևաբանական ընդհանրությունների առկայության պայմաններում կան նաև լուրջ տարբերություններ: Գոյականը գերմաներենում տարբերակում է քերականական սեռ, որը և հիմանկանում ընկած է գոյականի հոլովման և հոգնակի թվի կազմության հիմքում, մի բան, որ հայերենին միանգամայն անծանոթ է:

Գերմաներենում գոյականը թեքվում է իրեն ուղեկցող բառի կամ բառերի օգնությամբ, մինչդեռ հայերենում գոյականը ինքն է ընդունում հոլովման վերջավորությունները: Երկու լեզուների նմանությունների ու տարբերությունների ուսումնասիրման արդյունքում կարելի է գտնել „ ոսկե միջինը„ , որը արդյունավետ և թերևս դյուրին կդարձնի գերմաներենի ուսուցումը դպրոցական համակարգում:

Գլուխ 1. Գերմաներենի քերականության ուսուցման առանձնահատկությունները ավագ դպրոցի դասընթացում՝ գոյականի հոլովման օրինակով

Գերմաներենի քերականության հիմնական առանձնահատկություններից մեկը համակարգայնությունն է:

Համակարգայնության հատկանիշը կարել է դիտարկել որպես գերմաներենի քերականության ուսուցման նոր մեթոդական հիմք՝ օտար լեզվի դասընթացում՝ ներկայացնելով այն գոյականի հոլովման օրինակով:

Բանալի բառեր՝ օտար լեզվի դասընթաց, դասավանդման մեթոդներ, համակարգայնություն, քերականության ուսուցում, գոյականի հոլովում:

Գերմաներենի քերականության ուսուցման գործընթացը պահանջում է նոր մոտեցումներ և մեթոդակա հիմքի ձևավորում՝ գերմաներենի՝ որպես օտար լեզվի դպրոցական համակարգի դասընթացի համար:

Ուստի տվյալ հետազոտության արդիականությունը պայմանավորված է դպրոցական դասընթացի համար մոր մեթոդաբանական հիմքի ձևավորման անհրաժեշտությամբ:

Սույն հետազոտությունը նպատակ ունի գոյականի հոլովման համակարգի օրինակով ցույց տալ այն համակարգային առանձնահատկությունները, որոնց շնորհիվ բացահայտվում են գերմաներենի քերականության ուսուցման նոր մոտեցումներ:

Վերջիններս թույլ են տալիս դասավանդողին հասնել քերականության արդյունավետ ուսուցման և դասավանդման, իսկ սովորողների մոտ խթանել մոտիվացիա՝ գերմաներեն լեզուն ավելի դյուրին ընկալելու, ըմբռնելու և սովորելու գործում:

Տվյալ նպատակի իրագործման համար հետազոտական աշխատանքում առաջադրված են հետևյալ խնդիրները:

- Ցույց տալ գերմաներենի քերականության ուսուցման առանձնահատկությունները:
- Բացահայտել գերմաներենի քերականության համակարգային բնույթը հոլովման օրինակով:
- Ներկայացնել գերմաներենի քերականության համակարգայնության գործնական նշանակությունը գերմաներենի՝ որպես օտար լեզվի դպրոցական դասընթացներում:

Քերականության ուսուցման անհրաժեշտությունը գերմաներենի՝ որպես օտար լեզվի դասընթացում վերջին շրջանում մշտապես բախվում է տարակարծությունների:

Գերմաներենի քերականական համակարգը համարվում է բարդ, եւ այդպիսի կարծրատիպային մոտեցումը հաճախ խոչընդոտներ է ստեղծում ուսուցման գործընթացում: Այս դեպքում էական դեր է խաղում համապատասխան մեթոդաբանական հիմքի ձեւավորումը:

Ժամանակակից գերմաներենի դասընթացում հին մեթոդները փոխարինվել են նոր, ժամանակակից մեթոդներով, որոնք ոչ միայն միտված են քերականության արդյունավետ ուսուցմանը, այլև սովորողների մոտ դրական նախատրամադրվածության ձեւավորմանը: Այդուհանդերձ տեղ են գտնում այնպիսի հարցեր, որոնք կասկածի տակ են առնում քերականության ուսուցման կարևորությունը և ներմուծման եղանակներն ու ձևերը: Գերմաներենի՝ որպես օտար լեզվի ուսուցման գործընթացում սովորողները, անընդհատ առճակատվելով ձևի և բովանդակության հարցերին, կարող են ձանձրանալ կամ լեզվի ընկալման խնդիրներ ունենալ, քանի որ շեշտը հաճախ դրվում է ձևի վրա: Ինչպես օրինակ՝ բառեր, մասնավորապես գոյականներ սովորելիս իմաստից զատ պետք է ուշադրություն դարձնել նաև մի շարք այլ կարևոր երևույթների վրա, ինչպիսիք են գոյականի հոդը, հոգնակիի կազմության ձևը, որոշ դեպքերում նաև հոլովման տիպը: Ուստի ձևի, քերականական արժեք ունեցող երևույթների վրա շեշտադրված ուսուցման դեպքում այն թվացյալ թերությունները, որոնք դժվարացնում և դանդաղեցնում են ուսուցման գործընթացը, լեզվի ուսուցման հետագա փուլերում դառնում են այն հիմնաքարը, որի վրա կառուցվում է ամբողջ օտար լեզվի ուսուցման գործընթացը:

Քերականության ուսուցման գործընթացի արդյունավետությունը ապահովելու համար կարելի է անցնել քերականության ուսուցման համակցված ձևի, ըստ որի՝ քերականական երևույթները ներմուծվում են համապատասխան լեզվական նյութերի, տեքստերի միջոցով՝ ստեղծելով ներքին կապ լեզվի ձևի և բովանդակության միջև, ինչը էապես նպաստում է գերմաներենի դասընթացի հաղորդակցական բաղադրիչի զարգացմանը:

Այսպիսով, ցանկացած օտար լեզվի դասի կենտրոնում սովորողներն են՝ իրենց անձնական պահանջմունքներով: Ուստի յուրաքանչյուր դասի նպատակների, մեթոդների և ուսումնառության ձևերի պլանավորումը պետք է հարմարեցվի համապատասխան դասարանի կարիքներին և պահանջներին:

Քննարկվող խնդիրը տեղայնացնելով՝ սահմանափակվենք միայն գերմաներենի ավագ դպրոցի դասընթացով, որտեղ խոսքը վերաբերում է գերմաներենի՝ որպես օտար լեզվի դասավանդմանը, դասապատրաստմանը: Այս դեպքում քերականության հիմնավոր ուսուցման անհրաժեշտությունն այլևս ենթակա չէ քննարկման այն պարզ պատճառով, որ գերմաներենը՝ որպես օտար լեզու սովորողների մոտ չի կարող զրկված լինել տեսական հիմքերից: Գերմաներենի դասընթացում քերականության բաղադրիչն առաջնային է դառնում հատկապես այն դեպքում, երբ աշակերտը ավագ դպրոց տեղափոխվելիս ուսումնասիրած է լինում նաև անգլերենը որպես առաջին կամ երկրորդ օտար լեզու (ավագ դպրոց տեղափոխվելիս երկու օտար լեզու սովորած աշակերտը ինքն է ընտրում, թե ո՞ր լեզվով է շարունակում հետագա ուսուցումը): Այս դեպքում հիմնարար լեզվական գիտելիքների ներմուծումը նպատակ ունի սովորողների մոտ ձևավորել համակարգային մոտեցում՝ ստեղծելով նախադրյալներ ուսումնառության հետագա փուլերում լեզվաբանական հետազոտությունների համար:

1.1 Գերմաներենի քերականության համակարգային բնույթը հոլովման օրինակով:

Այսպիսով, գերմաներենի՝ որպես օտար լեզվի ավագ դպրոցի դասավանդման դասընթացներում քերականության ուսուցման նոր մոտեցում է դիտարկվում, որը հիմնված է գերմաներենի քերականության համակարգայնության սկզբունքի վրա: Սույն հետազոտական աշխատանքի մեջ համակարգայնության հատկանիշը ներկայացվում է գոյականի հոլովման օրինակով: Բարդ քերականական հարաբերությունները, համակարգային ներքին կապերը ծառայում են որպես դրական գործոն մեթոդաբանական նոր հիմքի ձևավորման համար՝ ապահովելով ուսուցման գործընթացի արդյունավետությունը: Այսպես՝ գերմաներենում գոյականի հարացույցը բավական հարուստ է ներկայացված: Այն դասակարգվում է ըստ հոլովման հատկանիշի:

Ավանդական գերմանական քերականության մեջ հակադրվում են գոյականի հոլովական համակարգի վերաբերյալ բազմաթիվ մոտեցումներ:

Անդրադարձ չկատարելով դրանց՝ նշենք, որ ընդունում ենք գոյականի համար հոլովման 4 տիպերը, որոնք առավել ընդհանրական են բոլոր քերականների մոտ, ըստ որի՝ տարբերում են գոյականի հոլովման ուժեղ, թույլ, իզական, խառը տիպեր:

Գերմաներենը, լինելով թեքական լեզու, ունի բարդ հոլովման հարացույց: Գերմաներենում գոյականն ունի 4 հոլով՝ ուղղական, սեռական, տրական, հայցական, որոնցից յուրաքանչյուրն ունի իր գործառույթները եւ հանդես է գալիս որոշակի շարահյուսական պաշտոնում: Գոյականի հոլովի կարգը սերտորեն կապված է հոդի հոլովման հետ, ինչպես նաև դերանունների որոշ տեսակների եւ՝ ածականի հոլովման հետ:

Ընդ որում՝ գոյականի հոլովի կարգնանմիջականորեն կապված է սեռի կարգի հետ և ածանցվում է դրանից՝ արական, իգական, չեզոք:

Հոլովը՝ որպես գոյականի քերականական կարգ, արտահայտում է վերջինիս շարահյուսական գործառույթը:

Անդրադարձ կատարելով գոյականի հոլովման առանձի նտիպերին՝ նշենք, որ ուժեղ հոլովման են պատկանում բացառապես արական եւ չեզոք սեռի գոյականներ, որոնց հիմնական հատկանիշը հոլովական **-es** վերջավորությունն է սեռական հոլովում:

Իգական հոլովման պատկանում են իգական սեռի գոյականները, որոնց համար հատկանշականը հոլովական վերջավորության բացակայությունն է

բոլոր հոլովներում: Թույլ հոլովմամբ հոլովվում են բացառապես արական սեռի գոյականներ, որոնց ցուցիչը **-en** վերջավորությունն է

սեռական, տրական, հայցական հոլովներում: Խառը հոլովման

գոյականները սահմանափակ թիվ են կազմում, եւ հիմնական հատկանիշը **-en** վերջավորությունն է բոլոր 3 հոլովներում՝

բացառությամբ ուղղականի, ինչպես նաեւ **-s** վերջավորությունը սեռական հոլովում՝ համադրելով թույլ եւ ուժեղ հոլովման հոլովական

վերջավորությունները: Այս հոլովման նույնպես պատկանում են արական սեռի գոյականներ՝ բացառությամբ՝ **das Herz** գոյականի, որը,

սակայն, նշում է հոլովման առանձնահատուկ տիպ՝ հայցական հոլովում թողնելով խառը հոլովման **-en** վերջավորությունը :

Հիմնվելով գերմաներենի՝ որպես օտար լեզվի դպրոցական դասընթացի ընթացքում կուտակված փորձի վրա՝ պետք է փաստել, որ այստեղ

առաջնային կարևորություն է ստանում որոշյալ հոդի հոլովումը, ինչն էլ ստեղծում է այն ամբողջ տեսական հիմքը, որի վրա կառուցվում է

գերմաներենի հոլովման հարացույցը:

Այս առումով ելակետային է համարվում մայրենի լեզուն, որը, շնորհիվ բարդ հոլովական համակարգի, դրսևորում է կատարյալ համարժեքություն՝ 4 հոլովների

առումով: Հայերենում առկա մյուս հոլովների բացակայության

հանգամանքը գերմաներենում լրացվում է նախդրավոր կառույցների միջոցով, որոնք թույլ են տալիս առկայացնել լեզվում առկա

քերականական իմաստներն ու հարաբերությունները: Որոշյալ հոդի հոլովման ձևերի ներմուծումը պետք է սովորողների մոտ ամրապնդել

համապատասխան վարժությունների համակարգի միջոցով՝ առավել արդյունավետ և հետաքրքիր դարձնելով տվյալ թեմայի յուրացումը:

Որոշյալ հոդի հոլովմանը պետք է համադրել անորոշ հոդի հոլովումը՝ ցույց տալով այն հիմնական սկզբունքը, որի միջոցով անորոշ հոդի

հոլովման ուսուցումը լրացուցիչ ջանքեր չի պահանջի սովորողների կողմից: Այսինքն՝ պետք է նշել համապատասխան հոլովական

վերջավորությունները, որոնք որոշյալ հոդի անալոգիայով կցվում են անորոշ հոդի վրա՝ կազմելով անորոշ հոդի հոլովման համակարգը,

ընդգծելով հոլովման համակարգում արական և չեզոք սեռերի գոյականների մոտ սեռական և տրական հոլովների ընդհանրությունը,

իգական, չեզոք սեռերի և հոգնակի ձևերի հոլովման համակարգերում ուղղական և հայցական հոլովների դրսևորած նմանությունները:

Այստեղ պետք է ընդգծել նաև անորոշ հոդի հոգնակի ձևի բացակայությունը: Նույն սկզբունքով ներմուծվում է նաև ժխտական (**kein, kein, keine, keine(Pl.)**), ստացական (**mein, mein, meine, meine(Pl.)** եւ այլն), ցուցական

(**dieser, dieses, diese, diese(Pl.), jener, jenes, jene, jene(Pl.)**) եւ հարցական (**welcher, welches, welche, welche (Pl.)**) դերանունների հոլովումը: Այս ամենը, սակայն, չի ենթադրում տվյալ թեմաների միաժամանակյա ներմուծում, այլ հաջորդականության սկզբունքով, աստիճանական անցում կատարելով մի թեմայից մյուսին՝ ելնելով դասարանի աշակերտների առանձնահատկություններից:

1.2 Գոյականի հոլովման համակարգը

Այսպիսով, գոյականի հոլովման համակարգը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

Nom.	das Buch	ein Buch	mein Buch	kein Buch
Gen.	des Buches	eines Buches	meines Buches	keines Buches
Dat.	dem Buch	einem Buch	meinem Buch	keinem Buch
Akk.	das Buch	ein Buch	mein Buch	kein Buch
Nom.	der Vater	ein Vater	mein Vater	kein Vater
Gen.	des Vaters	eines Vaters	meines Vaters	kein Vaters
Dat.	dem Vater	einem Vater	meinem Vater	kein Vater
Akk.	den Vater	einen Vater	meinen Vater	keinen Vater
Nom.	die Frau	eine Frau	meine Frau	keine Frau
Gen.	der Frau	einer Frau	meiner Frau	keiner Frau
Dat.	der Frau	einer Frau	meiner Frau	keiner Frau
Akk.	die Frau	eine Frau	meine Frau	keine Frau

Plural

Nom.	die Bücher	eine Bücher	meine Bücher	keine Bücher
Gen.	der Bücher	einer Bücher	meiner Bücher	keiner Bücher
Dat.	den Büchern	einen Büchern	meinen Büchern	keinen Büchern
Akk.	die Bücher	eine Bücher	meine Bücher	keine Bücher

Գոյականը գերմաներենում, ինչպես և հայերենու թեքվում է ըստ հոլովների, սակայն ի տարբերություն հայերենի, որտեղ հոլովն արտահայտվում է վերջավորությունների միջոցով, գերմաներենում գոյականը մեծ մասամբ զուրկ է հոլովական վերջավորություններից, և նրա հոլովի արտահայտման դերն իրենց վրա են վերցրել նրան ուղեկցող բառերը՝ հողերն ու դերանունները:

Ինչպես արդեն նշեցինք գերմաներենն ունի չորս հոլով՝ Nominativ (ուղղական), Genitiv (սեռական), Dativ (տրական), Akkusativ (հայցական):

Մնացած հոլովների իմաստը գերմաներենում արտահայտվում է կապերի և վերը նշված հոլովների համագործակցության միջոցով:

1. Nominativ հոլովը գերմաներենում պատասխանում է wer? (ն՞վ), was? (ի՞նչ)
2. Genitiv – ը՝ wessen? (ու՞մ, ինչի՞ն) հարցին
3. Dativ-ը՝ wem? (ու՞մ, ինչի՞ն) հարցին
4. Akkusativ-ը՝ wen? (ու՞մ), was?(ի՞նչ) հարցերին:

Հոլովման եղանակը գերմաներենում որոշվում է ըստ եզակի թվի, որովհետև հոգնակի թվում բոլոր գոյականները նույն ձևով են թեքվում:

Ինչպես արդեն նշել ենք ուժեղ հոլովման բնորոշ գիծը սեռական հոլովի –s կամ –es վերջավորությունն է:

Սեռական հոլովում –es վերջավորությունը պարտադիր է, եթե գոյականի հիմքն ավարտվում է –s, -ch, -b, -sch, -st, -z, -tz, -xt, -x, -ck, -pf-ով, ինչպես նաև՝ d-ով և t-ով:

Օրինակ՝

der Satz (նախադասություն)	des Satzes
der Stock (հարկ)	des Stockes
der Gras (խոտ)	des Grases
das Wort (բառ)	des Wortes
der Kampf (պայքար)	des Kampfes
der Wald (անտառ)	des Waldes
der Herbst (աշուն)	des Herbstes
der Tisch (սեղան)	des Tisches

der Fluß (գետ)

des Flusses

das Buch (գիրք)

des Buches

-er, -el, -em և -en- ով ավարտվող բառերից հետո դրվում է միայն -s, օրինակ՝

der Vater (հայր)

des Vaters

der Garten (պարտեզ)

des Schlüssels

der Schlüssel (բանալի)

des Gartens

der Atem (շունչ)

des Atems

Հոլովման հատուկ դեպքերը

Գերմաներենին հատուկ է նաև հոլովման հատուկ դեպքերը (Sonderfälle der Deklination)

Եվ այսպես կան արական սեռի մի քանի գոյականներ, որոնք հոլովման ժամանակ ստանում են և՛ ուժեղ և՛ թույլ հոլովման վերջավորությունները: Այդ գոյականներն են der Name(անուն) der Gedanke(միտք) der Buchstabe(տառ) der Frieden(խաղաղություն) der Wille(կամք) der Funke (կայծ) der Same(սերմ) der Glaube (հավատ) ինչպես նաև չեզոք սեռի das Herz(սիրտ) գոյականը:

Օրինակ՝

Nom.	der Name	der Wille	das Herz
Gen.	des Namens	des Willens	des Herzens
Dat.	dem Namen	dem Willen	dem Herzen
Akk.	den Namen	den Willen	das Herz

Հատուկ անունների հոլովումը

Գերմաներենին բնորոշ է նաև հատուկ անունների հոլովումը: Հատուկ անունները միայն սեռական հոլովում ընդունում են -s կամ -ens վերջավորություն՝ կախված բարեհնչյունությունից, օրինակ՝

- | | |
|---------------------------|--------------------------------|
| 1. Terjans Gedichte | (Տերյանի բանաստեղծությունները) |
| 2. Schillers Werke | (Շիլլերի երկերը) |
| 3. Annas Hefte | (Աննայի տետրերը) |
| 4. Die Berge Armenians | (Հայաստանի լեռները) |
| 5. Die Städte Frankreichs | 10 (Ֆրանսիայի քաղաքները) |

Եթե հատուկ անունները ավարտվում են –s, -ß, -sch, -x, -z, -ie-վերջավորություններով, որպես կանոն կիրառվում է –ens վերջավորությունը, սակայն այսօր նախապատվությունը տալիս են von նախդիրով տրական հոլովին, օրինակ՝

1. Dei Werke von Marx und Engels (Մարքսի և Էնգելսի երկերը)

Von ÷ Dativ կապակցությունը կիրառելի է նաև այլ դեպքերում, ինչպես օրինակ՝

1. Die Märchen von Tumanjan (Թումանյանի հեքիաթները)
2. Lieder von Charles Aznavour (Շառլ Ազնավուրի երգերը)

Եթե հատուկ անունը մի քանի մասերից է բաղկացած, ապա թեքվում է միայն վերջինը, ինչպես հայերենում, օրինակ՝

1. Wolfgang Amadeus Mozarts Musik (Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտի երաժշտությունը)
2. Johan Wolfgang Goethes Werke (Յոհան Վոլֆգանգ Գյոթեի երկերը)

Եթե հատուկ անուններից առաջ որևէ տիտղոս է դրված, օրինակ Frau(տիկին) Fräulein(օրիորդ) General(գեներալ), ապա սեռական հոլովում նրանք չեն թեքվում, օրինակ՝

1. Hast du heute Fräulein Gertruds Schwester gesehen?
Դու այսօր օրիորդ Գերտրուդի քրոջը տեսե՞լ էս:
2. Das ist Frau Richters Haus.
Սա տիկին Ռիխտերի տունն է:

Բացառություն է կազմում Herr (պարոն) բառը, որը թեքվում է, օրինակ՝

1. Das ist Herrn Richters Sohn.
Սա պարոն Ռիխտերի որդին է:

Սակայն, եթե հատուկ անուններից առաջ գործածվում են որոշյալ արտիկլով կիրառվող ազգակցություն, կոչում կամ մասնագիտություն ցույց տվող հասարակ անուններ, ապա թեքվում է միայն հասարակ անունը, իսկ հատուկ անունը մնում է անփոփոխ: Օրինակ՝

1. Die Arbeit des Professors Adamyan
Պրոֆեսոր Ադամյանի աշխատանքը
2. Die Soldaten des Leutnanten Avagyan
Լեյտենանտ Ավագյանի զինվորները:

Anfang(սկիզբ), Mitte(մեջտեղ, կես) Ende(վերջ, ավարտ) բառերից հետո ամիսների անունները մնում են անփոփոխ, օրինակ՝

1. Anfang Juni հունիսի սկիզբը
2. Mitte Oktober հոկտեմբերի կեսը
3. Ende Januar հունվարի վերջը

Ամիսների անուններն այլ դեպքերում ևս սեռական հոլովում սովորաբար վերջավորություն չեն ստանում, օրինակ՝

Ich erinnere mich immer jenes kalten Februar

Ես միշտ հիշում եմ այն ցուրտ փետրվարը:

Եթե ամիսների անուններին նախորդում է Monat գոյականը, ապա թեքվում է այդ գոյականը, իսկ ամսվա անունը մնում է անփոփոխ:

Եզրակացություն

Այսպիսով, գերմաներենի հոլովական համակարգին բնորոշ է համակարգայնությունը, ինչը դառնում է գերմաներենի՝ որպես օտար լեզվի դպրոցական դասընթացի հիմնական դրույթը: Այս հանգամանքը էական դեր է խաղում գերմաներենի քերականության ներմուծման մեթոդաբանության մշակման համար, և վերջինիս կիրառումը օտար լեզվի դասընթացում դառնում է հիմնաքարերից մեկը:

Ուստի, քերականության խորքային գիտելիքների ներմուծման անհրաժեշտությունը երբեք չի կարող հարցականի տակ դրվել, այս դեպքում արդեն խնդիրը մնում է զուտ մեթոդաբանության ընտրությունը: Գերմաներենի քերականությունն իր ամբողջ բարդությամբ հանդերձ նշում է համակարգային այնպիսի առանձնահատկություններ, որոնց շնորհիվ հնարավոր է ձևավորել հստակ մոտեցումներ և մշակել մեթոդաբանական հիմք գերմաներենի՝ որպես օտար լեզվի դպրոցական դասընթացի արդյունավետ իրացման համար:

Այդպիսի առանձնահատկությունը հենց գերմաներենի քերականության համակարգայնությունն է, որի շնորհիվ բացառությունները և մասնավոր դեպքերը լեզվում հասնում են նվազագույնի՝ առաջարկելով սովորողներին ստույգ բանաձևեր, մոտեցումներ այս կամ այն քերականական երևույթի վերծանման համար:

Գրականության ցանկ

1. Nana Berberjan, Eleonora Jeghiasarjan „ Kurs und Arbeitsbuch für die Hochschüler,, ԵՊՀ հրատարակչություն, 2010 ,470 էջ (445-447)
2. Մ. Ն. Հարությունյան „ Գերմաներենի քերականության համառոտ ձեռնարկ,, Երևան, «Նաիրի» 2006, 237 էջ (36-43)
3. Գաբրիելյան Յուրի „ Գերմաներեն լեզվի տիպաբանություն,, Երևան, 101 էջ
4. <https://www.studymarter.de>> deutsch
5. ՇՊՀ Գիտական տեղեկագիր-2020թ. N1 ՊԲ, (227-234)

